



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
«ԱՐԱՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ»

Ա. Միլանյան
Ա. ՄԻՆԱՍՅԱՆ
«05» 12 2017թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 110

Ձեռնարկողը՝

<<Ռենշին>> ՍՊԸ
ք. Երևան, Փ. Բյուզանդի 91շ. 72

Գործունեությունը՝

**Երևան քաղաքի Սասնա Ծռեր 3 հասցեում
նախարեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի
համալիրի նախնական գնահատման հայր**
ք. Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրեն՝



Սահակյան

Վ. Սահակյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 110

«05» 12 2017թ.

«Ռենշին» ՍՊԸ կողմից ներկայացված Երևան քաղաքի Սասնա Ծռեր 3 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի նախնական գնահատման հայտի վերաբերյալ

Սեյ օրհանգ Ջեյմս Չլարսոն

Պատվիրատու՝	<<Ռենշին>> ՍՊԸ
Նախագծող՝	<<Նարեկ Սարգսյան>> Ճարտարապետական արվեստանոց ՍՊԸ,
Ներկայացված նյութեր՝	Աշխատանքային նախագիծ, Նախնական գնահատման հայտ;
Տեղադրման վայրը՝	Ք.Երևան, Սասնա Ծռեր 3
Գործունեության կատեգորիան	/Գ/ կատեգորիա


Համաձայն ներկայացված աշխատանքային նախագծի <<Ռենշին>> ՍՊ ընկերությունը Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջան, Սասնա Ծռեր 3 հասցեում նախատեսում է կառուցել բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր: Կառուցապատվող հողատարածքը գտնվում է, Կոմիտասի փողոցից դեպի Դավթաշեն տանող կամրջի ձախակողմյան հատվածում, ճանապարհի հակառակ կողմում վերջին տարիներին կառուցված բնակելի համալիրի դիմաց: Նշված բարձրահարկ երկու համալիրները դառնում են Դավթաշենի մուտքն ազդարարող խորհրդանիշներ:

Մեծ թեքություն ունեցող հողատարածքը սահմանակից է Սասնա Ծռեր փողոցին և այդ փողոցից ճյուղավորվող, դեպի Աջափնյակ թաղամաս տանող ճանապարհին: Համալիրը բաղկացած է երեք «Ա», «Բ», «Գ» բնակելի և բակային տարածքի տակ. ±0.00 նիշից ներքև գտնվող, հիմնականում որպես ավտոկայանատեղ ծառայող 2 հարկերից:

«Ա» և «Գ» եզրային մասնաշենքերը բաղկացած են ստորգետնյա 2 և վերգետնյա 14 հարկերից: Կենտրոնական «Բ» մասնաշենքը բաղկացած է ստորգետնյա 2 և վերգետնյա 18 հարկերից:

«Ա», «Բ», «Գ» մասնաշենքերի 1-ին հարկերը նախատեսված են որպես առևտրահասարակական տարածքներ, իսկ 2-րդ հարկից սկսած բնակելի տարածքներ են:

Դեպի համալիրի տարածք հետիոտն և տրանսպորտային միջոցների ելումուտը կազմակերպված է Սասնա Ծռեր փողոցից մինչև ±0.00 նիշը բարձրացող, համալիրի շուրջը շրջանաձև պտտվող ճանապարհի միջոցով: Նույն հատվածից ճյուղավորվելով դեպի ստորգետնյա 1-ին հարկի նիշ է իջնում երկրորդ ճանապարհը, որտեղից նախատեսված է ավտոկայանատեղի 2 առանձնացված մուտքերը:



Ստորգետնյա 1-ին (-1) հարկում տեղակայված են ավտոկայանատեղեր, համալիրը սպասարկող անձնակազմի սենյակ, տրանսֆորմատորային ենթակայան և ճակատային հատվածում առևտրահասարակական տարածք:

Ստորգետնյա 2-րդ (-2) հարկում տեղակայված են ավտոկայանատեղեր, ջրի ռեզերվուարներ և պոմպակայան: -1 հարկից դեպի -2 հարկ տրասնպորտային միջոցների կայան ապահովված է թեքահարթակի միջոցով:

«Ա» և «Գ» մասնաշենքերի (2)-րդ հարկում նախատեսված է 3-ական բնակարան, իսկ «Բ» մասնաշենքում 4 բնակարան:

3-14-րդ հարկերի հատակագծային լուծումները նույնատիպ են (3): «Ա» մասնաշենքի «Ա-Գ» առանցքներում և «Գ» մասնաշենքի «Ը-7» առանցքներում 14-րդ հարկի վերին ծածկը շահագործվող է և 15-րդ հարկի բնակարանի համար ծառայում է որպես տերաս (պատշգամբ): «Ա», «Բ», «Գ» մասնաշենքերի նշված հարկերից յուրաքանչյուրում նախատեսված է 4-ական բնակարան:

15-18-րդ հարկերում հատակագծային լուծումները փոփոխվում են և նույնատիպ են: «Ա» և «Գ» մասնաշենքերի յուրաքանչյուր հարկում նախատեսված է 1-ական բնակարան, իսկ «Բ» մասնաշենքում 2 բնակարան:

«Ա», «Բ», «Գ» մասնաշենքերի վերջին հարկի տանիքը շահագործվող է, որտեղ տեղադրված են կաթսայատունը, ջրամբարները:

Ստորգետնյա հարկերից մինչև վերգետնյա հարկեր ուղղաձիգ կայան իրականացվում է «Ա», «Բ», «Գ» մասնաշենքերից յուրաքանչյուրում տեղադրված աստիճանավանդակի և երկուական վերելակների միջոցով:

Նախատեսվող շինարարական աշխատանքների փուլում մթնոլորտի վրա ազդեցությունը կապված է հողային աշխատանքների և շինարարական տեխնիկայի աշխատանքի ընացքում առաջացող արտանետումներով: Շինարարական աշխատանքները կրում են ժամանակավոր բնույթ և չունեն զգալի ազդեցություն:

Նախատեսվող շինարարական աշխատանքների փուլում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցությունների բացառման, նվազեցման նպատակով նախատեսված են մի շարք միջոցառումներ:

Օդային ավազանի վրա ազդեցությունը կապված է հողային աշխատանքների և շինարարական տեխնիկայի աշխատանքի ընթացքում առաջացող արտանետումներով:

Օդային ավազանի աղտոտումը նվազեցնելու նպատակով նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- շինարարական հրապարակները ցանկապատել համապատասխան բարձրության անթափանց թաղանթով,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
- պարտադիր կարգով շինանյութերը, ավելցուկ գրունտը և շինարարական աղբը տեղափոխել անթափանց ծածկոցներ ունեցող մեքենաներով,
- շինհրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել,
- սորուն նյութերը (ավազ, ցեմենտ) պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով,

իրականացնել հետևյալ միջոցառումները.

- շինարարության շինարարական տեխնիկայի տեղաշարժը և աշխատանքը իրականացվելու է միայն գոյություն ունեցող ճանապարհներով, բացառելով կանաչ գոտիների վնասումը, նոր տարածքների խախտումը և աղտոտումը:
- բացառվելու է շինարարական աղբի և հողերի կուտակումները բուսածածկ տարածքներում:
- պարբերաբար իրականացվելու է տեխնիկայի շարժիչների կարգաբերում,
- չոր եղանակների ժամանակ իրականացվելու է խճի, պահեստավորված և տեղափոխվող հողային զանգվածների խոնավացում:



Նկատի ունենալով այն հանգամանքը, որ աշխատանքները իրականացվելու են ջրային ռեսուրսներից բավականին հեռավորության վրա, կարելի է եզրակացնել, որ թե շինարարության, և թե շահագործմանը ընթացքում որևէ ազդեցություն ջրային ռեսուրսների վրա չի լինի:

Հողաձածկին պատճառված վնասները նվազագույնին հասցնելու նպատակով նախատեսված է ընթացքում տարածքի բուսահողը հանվելու և կույտավորվելու է պաշտպանված վայրերում, հետագայում այն օգտագործվելու է տեղանքի բարեկարգման համար,

- ապահովելու են անհրաժեշտ պայմաններ, որպեսզի հանված բուսահողը չխառնվի գրունտի հետ և չաղտոտվի ,

- բուսահողի պահեստավորման համար ընտրվելու է շինարարական հրապարակից դուրս տեղակայված վայր:

- շինարարության ավարտից հետո հանված բուսահողը օգտագործվելու է տարածքի կանաչապատման նպատակով:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվում է շինարարական հարթակների ջրցանի, ինչպես նաև ինժեներատեխնիկական անձնակազմի, բանվորների և վարորդների կոմունալ կենցաղային կարիքների ապահովման համար:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը բարեկարգել և իրականացնել կանաչապատման աշխատանքներ:

Շահագործման փուլում բազմաֆունկցիոնալ համալիրի համար ջեռուցման աղբյուր է հանդիսանալու տանիքում տեղադրված կաթսայատունը: Կաթսայատունը համալրված է Իտալական <<Unical>> ընկերության SPK 600 մոդելի 3 կաթսաներով՝ յուրաքանչյուրը 580կվտ հզորությամբ:

Շենքի հովացման և օդորակման համակարգերի սառնամատակարարման համար կաթսայատան տանիքի վրա նախատեսված է Midea ֆիրմայի օդային հովացմամբ սառեցման համակարգեր <<Չիլեր>> 130 կվտ հզորությամբ:

Բազմաֆունկցիոնալ համալիրի ջրամատակարարումը և ջրահեռացումը համաձայն <<Վեոլիա ջուր>> ՓԲԸ տեխնիկական պայմանի իրականացվելու է միանալով համանուն ցանցերին:

Եզրահանգում՝ Նախատեսվող գործունեության հիմնական ազդեցությունը պայմանավորված է շինարարության փուլով, ինչը չունի զգալի ազդեցություն և կրում է ժամանակավոր բնույթ: 2017թ նոյեմբերի 14-ին և 30-ին նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի վերաբերյալ կազմակերպվել են հասարակական լսումներ, որոնց արդյունքում կազմված արձանագրություններով մասնակիցները և ազդակիր համայնքը նախատեսվող գործունեության իրականացմանը տվել են իրենց հավանությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Ռենշին>> ՍՊԸ կողմից ներկայացված Երևան քաղաքի Սասնա Ծռեր 3 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն:

Մասնագետ



Ա. Մինասյան